ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՈՐՊԵՍ ԼՐԱՑՈՒՄ ՀԵՐՈՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ

«Երեկոյան Երևան» թերթում տպագրված Սասուն Գրիգորյանի «Մարտական Մարտիկը» հոդվածը ընթերցեցի հուզմունքով: Պահանջ առաջացավ գտնել ու կարդալ Միքայել Հակոբյանի «Անհայտ կորած մարդիկ» գրքի այն էջերը, որոնք վերաբերում են Մարտիկ Ավդալբեկյանի հերոսական պահվածքին գերության մեջ: Այն մասին, թե ինչպես դրսևորելով իրեն որպես աննկուն հայրենասեր, հրաժարվեց ֆաշիստներին ծառայելու գնով իր կյանքը փրկել:

Վերհիշելով Մարտիկին, նորից ու նորից համակվեցի տխուր մտորումներով: Չէ՞ որ ճանաչում էի նրան Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում համատեղ ուսումնառության տարիներից, գիտեի, թե ինչ դառն ճակատագիր նրան վիճակվեց, երբ 1937 թ. ստալինյան ռեպրեսիաների հերթական զոհը դարձավ նրա հայրը՝ նշանավոր հայ մտավորական Թադևոս Ավդալբեկյանը:

Մթագնվեց Մարտիկի ուսումնառության վերջին շրջանը: «Ժողովրդի թշնամի» պիտակին արժանացածի որդուն իր նման հազարավորների հետ հալածանքի ենթարկեցին, հոգեխով վիճակ ու դառն ապրումներ պատճառեցին: Ահա թե ինչու ավելի քան կես դար անց, երբ մեր օրերում արժանի գնահատական է տրվում այն մղձավանջային տարիների ամոթաբեր անցուդարձերին, հոգեկան պարտք համարեցի անդրադառնալ նրա հետ կապված պատմությանն ու այդ նպատակով պրպտումներ կատարեցի հարազատների մոտ պահպանված արխիվային որոշ «պատահիկներում»:

Դրանցից մեկը 1937 թ. նոյեմբերի 11-ով թվագրված հրաման է, որում կարդում ենք. «Շինարարական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող Մարտիկ Ավդալբեկյանին հեռացնել ինստիտուտից որպես հակահեղափոխականի»: Մեկ ուրիշը պատասխան է Մարտիկ Ավդալբեկյանի՝ ՀԿԿ Կենտկոմին հասցեագրած դիմումին: Պատասխանում է դպրոցական սխասխանում բաժնի վարիչը. «Հայտնում եմ ձեզ,— ասված է դրանում,— որ ձեր հեռացումը հաստատված է և ձեր խնդրով այլևս չենք զբաղվելու»: Այսպես կարճ ու կտրուկ: Պատասխանը թվագրված է 1937 թ. դեկտեմբերի 31:

Որ Մարտիկ Ավդալբեկյանը չի հաշտվել իրեն բաժին ընկած դառն ճակատագրի հետ, աննկուն ու համառ շարունակել է իր ուսանողական իրավունքները վերականգնելու համար դռներ բախել, վկայում է մի այլ փաստաթուղթ: Դա էլ դիմում է՝ հասցեագրված ԽՍՀՄ գլխավոր դատախազ Վիշինսկուն: Թարգմանաբար բերում ենք բովանդակությունը. «Ես Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի 5-րդ կուրսի ուսանող էի: Ինստիտուտում գտնվելու իմ բոլոր տարիներին ես ուսանել եմ լավ, շատ ցարվածային և գերազանց, պարբերաբար պարգևատրվել եմ, դիտողություններ չեմ ստացել ո՛չ դիրեկցիայից, ո՛չ էլ այլ կազմակերպություններից: Սակայն, երբ 1937—38 ուսումնական տարվա սկզբին ձերբակալվեց իմ հայրը, դիրեկցիայի հրամանով որպես «հակահեղափոխական» ես հեռացվեցի ինստիտուտից: Հետո այդ հրամանը չեղյալ համարվեց և «Հեռացնել համաձայն ուսանողական ժողովի որոշման» ձևակերպումը ստացավ: Ի փոփոխումն այդ հրամանների վերջապես ինձ տրվեց մի տեղեկանք. «Հեռացնել իր դիմումի համաձայն» բովանդակությամբ: Հրամանների բովանդակության այսպիսի էվոլյուցիան պերճախոս վկայում է...» (փաստաթուղթը ընդհատվում է):

Դառնացած թերթում եմ մի այլ փաստաթուղթ: Դա Մարտիկ Ավդալբեկյանի խոովարարության շարադրանքն է՝ կատարված անփառունակ ուսանողական ժողովի մասին, որը տեղի է ունեցել 1937 թ. դեկտեմբերի 27-ին: «Ժողովը, որը նպատակ ուներ քննելու իմ դեմ առաջ քաշված մեղադրանքները,— գրել է Մարտիկը,— փաստորեն վերածվեց դեմագոգիայի՝ մի քանի ընկերների ելույթների հետևանքով: Այդ ժողովը հնարավորություն չտվեց ինձ արտահայտվելու և ցույց տալու իմ վրա դրված մեղադրանքների ամբողջ ստությունը: Այն վերածվեց աղմկարարության: Բանը այնտեղ հասավ, որ նախագահն ինձ զրկեց ձայնից, թույլ չտվեց արտահայտվելու՝ կոկնելով խոսողներից մեկի միտքը, թե ես ամբիոնը չարաշահում եմ: Սա նշանակում է՝ ես ժողովի կարգը խախտում եմ, որովհետև իմ կենսագրությունը համառոտակի պատմելուց ես այլ միտք չեմ արտահայտել, և երկրորդ, այն պատճառով, որ ինչքան էլ մեղադրանքները խիստ լինեն, նախագահողը իրավունք չուներ ինձ վերջին խոսքից զրկելու: Ինձ վերջին խոսքից զրկելու պատճառը ոչ թե այն էր, որ ես ամբիոնը չարաշահել եմ, այլ այն, որ ես իմ ձեռքի տակ ունեի անձերքելի փաստեր, որոնք իրենց երկյաթի տրամաբանությամբ գալիս էին հերքելու բոլոր մեղադրանքները...»:

Այդ, ես կասեի, ինկվիզիցիոն ժողովի մպսնակիցներից ոմանք հիշում են «մեղադրյալի» խրոխտ ու աննկուն պահվածքը: Երբ նախագահողը Մարտիկից պահանջեց հայտարարել, որ իր հայրը սրիկա է եղել, սա անվարան պատասխանեց. «Թե իմ հայրը ով է եղել, դա ցույց կտա դատարանը (երևի միամտորեն հուսադրվելով, որ այնտեղ արդարությունը կիշխի.— Վ. Հ.), բայց որ Դուք սրիկա եք, այդ բոլորը գիտեն»: Հիրավի, միանգամայն ճշմարտացի էր որակավորումը մի մարդու, որն այդ մղձավանջային տարիներին կատարյալ ավերածություններ առաջացրեց մեր կրթական օջախում, նրա հիմնադիրներից շատերի գլխակերը եղավ:

Համառ ու հետևողական ջանքերով Մարտիկ Ավդալբեկյանը հետամուտ եղավ իր ուսանողական իրավունքների վերականգնմանը և հաջողության հասավ՝ միայն 1939 թ. սկզբին, երբ վերջապես նրան թույլատրվեց կատարել դիպլոմային նախագիծ: Տողերիս հեղինակին, որ ընդամենը երկու տարի առաջ էի ավարտել ինստիտուտը և աշխատանքի էի թողնվել ճարտարապետության ամբիոնում, «դեղնակտուց» մի ճարտարապետիս պատիվ վիճակվեց լինել Մարտիկ Ավդալբեկյանի դիպլոմային նախագծի ղեկավարը: Իրավիճակն այնպիսին էր, որ ֆակուլտետի ու ամբիոնի ըզգալի թվով դասատուներ հարկադրյալ դադարել էին գործելուց. կամ այլևս չկային, կամ գտնվում էին հեռավոր տեղերում:

Մարտիկի ժառանգների կողմից ինձ տրամադրված արխիվում ահա գտնում եմ իր դիպլոմային թեմայի՝ հասարակական լողարան նախագծելու առաջադրանքը՝ վրան իմ ձեռքով գրված «Մ. Ավդալբեկյանին» մակագրությամբ:

Թեև անցել է ավելի քան կես դար, բայց լավ հիշում եմ, թե ինչպիսի ջանասիրությամբ էր հեղինակն աշխատում այդ նախագծի վրա, ցուցաբերելով իրեն որպես լայն հետաքրքրությունների տեր, շրջահայաց, բացառիկ աշխատասեր և ունակ ուսանող: Ահա դիտում եմ նախագծի մի քանի լուսանկարները, որոնք պահպանված են արխիվում: Նույնիսկ այսօրվա չափանիշներով դրանք ինչպես ֆունկցիոնալ և գեղարվեստական լուծմամբ, այնպես էլ գրաֆիկական կատարմամբ միանգամայն կատարյալ են:

Մարտիկ Ավդալբեկյանը թեև ինստիտուտն ավարտեց որպես ինժեներ-շինարար (ճարտարապետական բաժնում ընդունելությունն ընդհատվեց 1932 թ.), սակայն իր նախասիրություններն ու ձիրքը նրան մղեցին ճարտարապետության ասպարեզ: Արխիվային պատահիկներում տեղ է գտել նաև մի փաստաթուղթ: Դա մի բնութագիր է՝ ստորագրված բուսապատման տրեստի կառավարչի, կուսակազմակերպության քարտուղարի և տեղկոմի նախագահի կողմից: Ահա դրա բովանդակությունը. «Ավդալբեկյան Մարտիկ Թադևոսի. ծնված 1915 թ. Իգդիրում (Տաճկաստան): Հեղափոխությունից առաջ ծնողները զբաղվել են ուսուցչությամբ. հեղափոխությունից հետո հայրը զբաղվել է գրական և գիտական աշխատանքով:

Մարտիկ Ավդալբեկյանը աշխատում է բուսապատման տրեստում 1940 թ. փետրվարի 27-ից որպես ճարտարապետ, ունի բարձրագույն կրթություն, իր անմիջական աշխատանքները կատարում է լավ, շատ քիչ է հետաքրքրվում հասարակական աշխատանքներով (պատճառը մեզ հայտնի է), հայրը և հորեղբայրը (խոսքը վերաբերվում է փորձառու հողաչափ և քարտեզագետ Խաչատուր Ավդալբեկյանին) բանտարկված և աքսորված են 1937 թ.»:

Ես հիշում եմ պատերազմից առաջ կանաչապատման տրեստին առընթեր նախագծային խումբը, որի ղեկավարն էր ճարտարապետ Հրայր Իսաբեկյանը: Այնտեղ կարճատև աշխատեցին Ռաֆայել Իսրայելյանը, Լևոն Բաբայանը և իմ մի քանի այլ ընկերներ: Նախագծային այդ խումբը ստեղծված էր զբոսայգիների ու պուրակների, դրանցում ճարտարապետական փոքր ձևերի (մուտքերի աղբյուրների, ցայտաղբյուրների, ճաղերի և այլն) նախագծման համար: Արխիվում գտնում եմ նաև իր մշակած նախագծերից մի քանիսի լուսանկարները, ինչպես նաև Կոմերիտական զբոսայգու մուտքի նախագիծը, որի վրա որպես հեղինակ Հրայր Իսաբեկյանի ազգանվան կողքին հիշատակված է՝ «Մարտիկ Ավդալբեկյան»:

Դիտելով դրանք, գոհունակությամբ համոզվում ես, որ Մարտիկ Ավդալբեկյանը, թեև հատուկ ճարտարապետական դպրոց չէր անցել, բայց օժտված էր նրբին ճաշակով, ստեղծագործական անկիճելի ձիրքով, ճարտարապետական փոքր ձևերում ազգային մոտեցողության ձգտելու կարողությամբ:

Ցնորհաշատ երիտասարդը, նույն տարիներին ընդգրկվելով նշանավոր հայ քանդակագործ-նկարիչ Երվանդ Քոչարի գլխավորած հեղինակային խմբում, մասնակցեց Նիզամի Գյանջևիի արձանի նախագծման համամիութենական մրցույթին (նախագիծն արժանացել է երրորդ կարգի մրցանակի):

Գերության մեջ իր մահկանացուն կնքած Մարտիկի կենսագրությունը լրացնելուն նվիրված այս ակնարկը կուզենայի ավարտել վերջին մի փաստաթղթի վկայակոչմամբ: Դա ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի պատմության և նյութական մշակույթի ինստիտուտից է, որով գիտակամ քարտուղարն իր 1940 թ. սեպտեմբերի 5-ի գրությամբ Մարտիկ Ավդալբեկյանին հրավիրում է ասպիրանտուրա ընդունվելու համար: Դրանից հետևում է, որ նա ուխտել էր զինվորագրվել մեծն Թորամանյանի սրբազան գործին, իրեն նվիրել հայկական ճարտարապետության ուսումնասիրությանը: Ափսոս, որ այդ ուխտն անկատար մնաց, քանզի իր մատաղ կյանքը զոհեց հայրենիքի ազատագրմանը:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պրոֆեսոր